ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

№ ԱԱ/14/1190-2026

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գալյան

Տեղեկացնում եմ, որ 2024 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 14:00-ին Առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ No 1593 – Ա հրամանով ստեղծված լիցենզավորման հանձնաժողովը քննարկեց Առողջապահության նախարարության կողմից «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի արտադրության թիվ Կ-ԿԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) և 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի ներմուծման և արտահանման թիվ Կ-ՆՄԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիաների գործողությունը դադարեցնելու հարցը, որի վերաբերյալ հանձնաժողովը փակ գաղտնի քվեարկության արդյունքում կայացրել է հետևյալ եզրակացությունը.

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերը, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1170-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը և ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության կարծիքը՝ դադարեցնել «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Առողջապահության նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի արտադրության թիվ Կ-ԿԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիայի գործողությունը,

Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
Հեռ.՝ (+ 374 60) 80 80 03 էլ. փոստ՝ minister@moh.am

Հիմք ընդունելով՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերը, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1170-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը և ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության կարծիքը՝ դադարեցնել «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Առողջապահության նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի ներմուծման և արտահանման թիվ Կ-ՆՄԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիայի գործողությունը:

Սակայն, լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա լիցենզավորող մարմինը որոշում չի կայացրել, որպիսի պարագայում լիցենզավորող մարմնի որոշում է համարվում լիցենզավորման հանձնաժողովի որոշումը («Լիցենզավորման մասին» օրենք, 40-րդ հոդված, 9-րդ մաս https://surl.li/yksgti):

Կից Ձեզ եմ տրամադրում 2024 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 14:00-ին Առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ No 1593 – Ա հրամանով ստեղծված լիցենզավորման հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունը (որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված կարգավորումները՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականով ապահովել կից ներկայացված եզրակացության հրապարակումը լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին որոշման կարգով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

19.01.2026

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Կատարող՝ Միեր Պապոյան
Լիցենզավորման գործակալություն
Հեռ.՝ 060808003 /2900/

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Եզրակացություն

Առողջապահության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի նիստի

ք.Երևան 19.11.2024

2024 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 14:^{00}-ին Առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ No 1593 – Ա հրամանով ստեղծված լիցենզավորման հանձնաժողովը հետևյալ կազմով.

Լ. Նանուշյան - Առողջապահության նախարարի առաջին տեղակալ (նախագահ)

Ա. Ավոյան – Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ (նախագահի տեղակալ)

Վ. Ալեքսանյան - Առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության պետ (քարտուղար)

Ք. Ղոնյան - Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ

Մ. Հարությունյան – Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ

Վ. Զոփունյան - «Իրավունքների զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ

Քննարկվեց Առողջապահության նախարարության կողմից «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի արտադրության թիվ Կ-ԿԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) և 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի ներմուծման և արտահանման թիվ Կ-ՆՄԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիաների

գործողության դադարեցնելու հարցը, որի վերաբերյալ հանձնաժողովը քննարկումների և փակ գաղտնի քվեարկության արդյունքում տվել է հետևյալ եզրակացությունը.

«ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ

Եզրակացություն՝ դադարեցնել «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Առողջապահության նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի արտադրության թիվ Կ-ԿԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիայի գործողությունը:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերը, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1170-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը և ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության կարծիքը:

«ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ

Եզրակացություն՝ դադարեցնել «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Առողջապահության նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի ներմուծման և արտահանման թիվ Կ-ՆՄԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիայի գործողությունը:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերը, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1170-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը և ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության կարծիքը:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Նանուշյան

Նախագահի տեղակալ

Անդամներ